## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**10 դեկտեմբերի 2024 թվականի N** 523 **-Ա**

### «ՀԱՐԹԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՎԵՐ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԳԱՅԱՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի 1392-Ն որոշման N 3 հավելածի 61-րդ կետը և կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Գանդայանի զեկուցագիրը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. 2024 թվականի դեկտեմբերի 10-ից լուծել «Հարթաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նվեր Պողոսյանի հետ 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված N 16 աշխատանքային պայմանագիրը:
2. 2024 թվականի դեկտեմբերի 10-ից «Հարթաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով համակարգող Գայանե Հայրապետյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Recoverable Signature

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**